

### ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի  
առաջին բաժնի պետ,  
Երևանի «Գլաժոք» համալսարանի իրավագիտության  
ամբիոնի հայցորդ

## ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄԸ

Իրավական կարգավորումը և իրավունքը մարդկային, հասարակական ֆեոմոնենտեր են: Իրավունքը ստեղծվում է մարդկանց կողմից, գործում է մարդկանց միջոցով և մարդկանց համար: «Իրավունքը նման չէ այսպես կոչված ֆիզիկական բնական ուժերին, որոնք գոյություն ունեն մարդու գործողություններից անկախ, ինչ որ օբյեկտիվորեն մարդուն հակաենթադրվող: Ընդհակառակը, իրավունքը կարգ է՝ սահմանված մարդկանց կողմից իրենց համար: Իր գործողություններում մարդը ենթարկվում է պատճառահետևանքային օրենքին կամ գործում է ազատ, կամայականորեն, այս հարցում դա որևէ նշանակություն չունի: Ինչ էլ որ լինի՝ ըստ պատճառականության օրենքի կամ ազատության օրենքի, իրավունքը այդուհանդերձ ստեղծվում է ոչ թե անկախ, այլ ընդհակառակը, ոչ այլ կերպ քան մարդու գործունեության միջոցով, նրա միջնորդությամբ»<sup>1</sup>: Հետևաբար, իրավունքի մարդկության մեջ գոյության և գործողության հիմքերը կապված են մարդու էության հետ: Իսկ մարդն իր էությամբ «կենսասոցիալական հոգևոր» էակ է: «Մարդը որպես էակ ընդունակ է ակտիվորեն գործելու, հարմարվելու հանգամանքներին կամ փոխելու դրանք իր կարիքներին համապատասխան, ստեղծելու բնության մեջ գոյություն չունեցող առարկաներ, իր շուրջը ձևավորելու հատուկ արհեստական միջավայր՝ քաղաքակրթություն և ժամանակ առ ժամանակ այն ավերելու, որպեսզի նորից իր իսկ ուժերով ձեռնարկի դրա վերաստեղծումը և կատարելագործումը»<sup>2</sup>: Այսպիսով, մարդու՝ որպես էակի հիմնական տարրերիչ առանձնահատկությունը այլ կենսաբանական էակներից կայանում է նրանում, որ մարդու գոյությունը միաժամանակ ընթանում է բնության մեջ, հասարակության մեջ և մշակույթում<sup>3</sup>: Բնության մեջ մարդը բնական էակ է և ապրում է բնական օրինաչափություններով, հասարակության մեջ սոցիալական էակ է և գործում է հասարակական օրենքներին (ներառյալ իրավական) համապատասխան, իսկ մշակույթում, որպես հոգևոր իդեալական արժեքների ամբողջություն, մարդն ապրում է հոգևոր կյանքով<sup>4</sup>: Մարդու գոյության և էության այս երեք կողմերը՝ կենսաբանական, հասարակական և իդեալական, անխզելի են ու անբաժան: Դրանք, որպես մարդկության գոյության եմփիսանական կողմեր, փոխալայմանավորված և փոխկապված են, միմյանց վրա փոխազդում են: Հասարակական կյանքի իրավական ոլորտում մարդը գործում է իր էության այդ երեք անխզելի նորմերին համապատասխան: Ամեն ինչ սկսվում է իրավական իդեալից՝ որպես հոգևոր աշխարհի երևույթ:

Ձևավորվելով որպես իդեալ՝ իրավական գաղափարները ունեն զուտ բնական և հասարակական արմատներ: Հենց այդ սխեմայով է զարգանում հասարակական կյանքը արդեն մի քանի հարյուրամյակ, եթե այդ իդեալը ներկայացնենք որպես բնական իրավունքի տեսություն: Մարդու կենսաբանական (բնական) էությունը հիմք տվեց մշակելու բնական իրավունքի տեսությունը որպես իդեալ: Այդ իդեալն իր իրականությունն ու պաշտոնական ամրագրումն ստացավ իրավունքի դրական աղբյուրներում (օրենքներում): Սակայն միևնույն է այդ իդեալը, որպես անհրաժեշտություն, դեռևս մնում է որպես չիրացված հնարավորություն, նորմատիվ ձև ունեցող իդեալի տեսք, քանի դեռ չի վերածվել իրականության և իրավակարգի: Հասարակական կյանքի իրավական համակարգի գործողության ընթացքում իրավունքի գոյության այդ երեք ձևերը՝ իդեալը, նորմը և իրականությունն ունեն տարբեր հասցեատեղեր: Իդեալը մշակում են բարձր հոգևոր արժեքների կրողները: Օրենսդրի խնդիրն է ապահովել այդ իդեալի (օրինակ՝ բնական իրավունքի կատեգորիաների) վերածումը դրական իրավունքի՝ արտահայտված նորմատիվ ակտերում: Իրավական կյանքի հաջորդ շրջան ենթադրում է անցում պոզիտիվ-իրավական նորմերից իդեալի կենսագործման իրականացման, կիրառման: Այսպիսով, ցանկացած իրավական համակարգի ձևավորման և կայացման սկզբում առաջին շարքում է հայտնվում իրավական իդեալը՝ որպես տեսություն: Այն դեռևս ընդամենը իդեալ է, երազանքի պես մի բան: Սակայն իրավական իդեալը, որպես պիտոյի (անհրաժեշտի) նորմատիվ-արժեքային կերպար, ունի բարձրագույն, կատարյալ ձև<sup>5</sup>: Իրավական իդեալն ունի նպատակային բնույթ և ընդունակ է հեղաշրջելու իրավագիտակցությունը և դրա միջոցով իրավական կյանքը և համակարգը: Իրավական իդեալը, որ համապատասխանում է սոցիալական շահերին և սկզբնապես գոյություն ունի միայն իրավագիտակցության մեջ, իր ձևական և քաղաքակիրթ արտահայտությունն է գտնում իրավաբանական օրենքում: Իրավական իդեալը, որպես օրենքների տեքստում շարադրված կայուն նորմերի համակարգ, հասարակության համար երաշխիք է անվերջ փոփոխությունների, անկայունության և անորոշության դեմ, որովհետև հասարակական կյանքի ձգտումներից մեկն էլ կայուն կողմորոշիչներն են: Եթե չլինեք մարդկանց փոփոխականությունը և շահերի բախումը, ապա չէր լինի նաև իդեալին իրավական նորմատիվ ձև տալու անհրաժեշտությունը: Սակայն օրենքի նորմը ըստ էության

www.lawinstitute.am

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նույնալիսի իդեալական կառույց է, ինչ որ դատողությունը (իդեալը), որ գտնվում է իրավագիտակցության մեջ: Չէ որ հենց ինքը՝ նորմատիվ ձևը (օրենքը), դեռ իրական կյանքը չէ, այլ ընդամենը փաստաթուղթ, տեքստ, որ ուղղված է ապագային, այսինքն՝ միայն օրենքի հրապարակմամբ մենք չունենք այն ինչը որ կա, այլ ընդամենն այն, ինչը որ պետք է լինի: Այսպիսով, որպեսզի դա դառնա իրականություն, այսինքն՝ իրական կյանքը ընթանա օրենքի նախանշած հունով, անհրաժեշտ են նոր ջանքեր՝ ուղղված դրական իրավունքի կենսագործմանը: Օրենքով ամրագրված իդեալն ինքնին չի երաշխավորում իրավակարգի գոյություն, այսինքն՝ օրենքին համապատասխանող հարաբերություն: Մա հասարակական կյանքի օրինաչափություններից է, որովհետև «մարդիկ, որպես կանոն, մտածում են մի բան, ասում այլ բան, անում երրորդը (և բոլորը տարբեր կերպ): Ինչպես օրենքի բառերը չեն գործում առանց դրանք գիտակցելու, այնպես էլ իրավական պատկերացումները միայն նախանշում են վարքագծի հնարավոր ուղիները որպես «անհրաժեշտ» (պիտոյ), սակայն չեն պարունակում բավարար կամային ինչպես մեք դրանց իրականացման համար»<sup>6</sup>: Հետևաբար, իրավունքն իր գոյությամբ արժեքավոր է ոչ թե այնքանով, որ գոյություն ունի օրենքում և նույնիսկ իրավագիտակցությունում (որպես գիտելիք և պատկերացում), այլ որքանով, որ կենսագործված է մարդկանց գործողություններում և վարքագծում հասարակական հարաբերությունների կենդանի շրջանառության մեջ՝ վերածվելով արդեն կարգավորված փաստի՝ իրավակարգի: Ինչպես և ցանկացած իրավական ակտի, օրենքի ընդունումը, հեշտումը միայն գործի սկիզբն է, խնդիրը կյանքում այն կենսագործելն է, գործնականում՝ իրականացնելը: Օրենսդրության իրականացումը ֆիզիկական և իրավաբանական անձանց այնպիսի վարքագիծ, գործողություն և գործունեություն է, որոնցով կյանքում կենսագործվում են իրավական կարգադրարգրերը: Ի տարբերություն այլ սոցիալական նորմերի իրականացումից (սովորույթ, բարոյականություն և այլն)՝ օրենսդրության իրականացումն ունի իր յուրահատկությունները, որոնք բխում են իրավասահմանումների բուն բնույթից: Այդ սահմանումները միայն պիտոյ են, որոնք պետք է կենսագործել գոյի, իրավական հնարավորությունը՝ իրավական իրականության: Այդպիսի փոխակերպումն իրականացվում է որոշակի սկզբունքներով՝ մշակված իրավագիտության տեսության և պրակտիկայի կողմից»<sup>7</sup>:

Առաջադրված փիլիսոփայական-տեսական կառույցը կարելի է կիրառել ցանկացած իրավահասկացողության վրա կառուցված իրավական տեսության նկատմամբ: Այսպես, բնական իրավունքը որպես իդեալ է ներկայացնում Մ.Ն. Եգորովը, ըստ որի՝ բնական իրավունքը կատարելագործվելու կոչ է գործող իրավունքի համար, բայց ոչ միայն կոչ, այլ այդպիսի կատարելագործման պարտադիր ուղղություն: «Բնական իրավունքը հանդես է գալիս որպես իդեալ, որին պետք է ձգտի գործող իրավունքը իր զարգացման պատմական ճանապարհին: Այն հայտ է, որ ոչինչ, բացի մարդկային բանականությունից ի վիճակի չէ որոշելու և ձևակերպելու այդպիսի իդեալը: Այդպիսի իդեալին հասնելու համար բնական իրավունքը պետք է տա արտաքին ազատության բնութագիրը իր ծավալով և բովանդակու-

թյամբ, ինչպես նաև որոշի իրեն ներկայացնող և սահմանափակող նորմերի պահանջները: Որպես իդեալ հասկացված բնական իրավունքը ոչ մի կերպ չի հակասում իրավունքի բնորոշմանը՝ իրավունքը դա արտաքին ազատությունն է ներկայացված և սահմանափակված նորմով»<sup>8</sup>: Այսպիսով, փիլիսոփայական մոտեցման դեպքում մարդկային հասարակության իրավական համակարգի կայացումը սկզբնավորվում է իրավական իդեալից (ծրագրից, տեսությունից), անցնելով պոզիտիվացման գործընթացը, վերածվում նորմատիվ ձև ունեցող իրավական պահանջների (տեքստի): Որպես պիտոյ, այդ պոզիտիվ իրավական ձևը դեռևս իրականություն չդարձած հնարավորություն է: Այն դեռևս չի կենսագործվել իրական կյանքում: Հետևաբար իրավական համակարգի շարժումը պետք է շարունակվի իրավական նորմատիվ ձևը կյանքում կենսագործելու և այդպիսով իդեալը իրականություն դարձնելու համար: Այս ամբողջ շղթան ըստ էության իրավունքի կենսագործողությունն է, որի վերջնական նպատակը իրավական իդեալին համապատասխանող իրավակարգի հաստատումն է:

«Իրավունքի կենսագործում» գիտական կատեգորիայի փիլիսոփայական-իրավական հարթության վրա վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ «իրավունքի կենսագործում» հասկացությունը և դրա վրա կառուցված տեսությունն արդի դարաշրջանում ավելի լայն դիրքերից վերահիմնատավորման կարիք ունի, քանի որ իրավունքի կենսագործումը, որպես գործընթաց և արդյունք, ընդգրկում է իրավունքի (որպես էության կամ իդեալի կամ սկզբունքի) ձևավորման (դրականացման) ու զարգացման գործընթացը, ինչպես նաև իրավական ձևերում ամրագրված նորմերի կենսագործման, իրավակարգի վերածման գործընթացը: Այսպիսով, իրավունքի կենսագործումը ենթադրում է ոչ միայն իրավունքի բոլոր ստեղծելիքների կողմից իրավունքի պաշտոնական ձևերում ամրագրված իրավական կարգադրարգրերի բարեխիղճ, անշեղ և խստագույն կենսագործումը, (օգտագործման, պահպանման կատարման, կիրառման միջոցով), այլև որպես օբյեկտիվ էություն կամ իդեալ, կամ սկզբունք հասկացված իրավունքի կենսագործում իրավական պաշտոնական ձևերում: Մակայն իրավունքի կենսագործում հասկացության ընդգրկման սահմանները կախված են նրանից, թե ինչ ենք հասկանում «իրավունք» ասելով: Այսպիսով ինչպես իրավունքի փիլիսոփայության ու տեսության, իրավագիտության այլ ոլորտների հիմնահարցերի, այնպես էլ իրավունքի կենսագործման տեսության հիմնախնդիրների լուծման համար ուղեմիջային տեսական ու գործնական նշանակություն ունի նաև իրավահասկացողությունը:

Իրավական տեսության ցանկացած վարկածի հիմքում դրված է իրավահասկացողություն ինչ-որ տարբերակ: «Իրավաբանական դոգմատիկական և պրակտիկական անպայմանորեն հետևում են իրավունքի ընդհանուր տեսության մեթոդաբանական մասին, որի հիմնահարցը կամ հարցերի հարցն «իրավունք, հասկացության բնորոշումն է»<sup>9</sup>: Իրավունքի կենսագործման տեսության տարբեր վարկածների հիմքում, ըստ էության, ընկած է իրավահասկացողության որևէ տիպ, հետևաբար՝ հենց իրավահասկացողությունն է այն մեթոդաբանական

հիմքը, որը կանխորոշում է իրավունքի կենսագործման տեսության տիպը:

Իրավահասկացողության տարբերակների տիպաբանական վարկածներից են համարվում հետևյալ մոտեցումները՝ իրավահասկացողության լեգիտատական և իրավաբանական տիպեր<sup>10</sup>, իրավաբանական մտածողության իդեալիստական (մետաֆիզիկական) և պոզիտիվիստական տիպեր<sup>11</sup>, իրավահասկացողության բովանդակային (սուբստանցիոնալ), ձևական և խառը տիպեր<sup>12</sup>:

Ֆրանսիացի իրավագետ Ժ. Բերթելի դասակարգմամբ իրավական մտածողության տիպերն են համարվում պոզիտիվիստականը և իդեալիստական-մետաֆիզիկականը: «Իրավաբանական պոզիտիվիզմը որպես արժեք ճանաչում է դրական իրավունքի նորմերը և ցանկացած իրավունք հանգեցնում է տվյալ դարաշրջանում և պետության մեջ գործող նորմերին՝ ուշադրություն չդարձնելով այն բանին՝ արդար է արդյո՞ք այդ իրավունքը, թե՛ ոչ: Այսպիսով իրավունքը դառնում է որպես ինքնավար առարկա՝ նույնացված պետության կամքի հետ... Այդ իրադրությունում չպետք է առաջանա բախում իրավունքի և պետության միջև, որը հանդես է գալիս որպես իրավունքի միակ աղբյուրը...»<sup>13</sup>: Ժ. Բերթելի այս դատողություններից բխում է, որ պոզիտիվիստական իրավամտածողության համար «իրավունքի կենսագործումը» հասկացությունն ունի նեղ, նորմատիվիստական իմաստ և հանգում է միայն նորմատիվ ձևում ամրագրված պետական կամքի՝ իրավունքի նորմի կենսագործմանը (պահպանմանը, կատարմանը, օգտագործմանը, կիրառմանը): Մինչդեռ իդեալիստական փիլիսոփայական իրավամտածողության շրջանակում «իրավունքի կենսագործումը» հասկացությունը ձեռք է բերում ավելի լայն շրջանակ: Ըստ Ժ. Բերթելի՝ իրավաբանական իդեալիստական փիլիսոփայության դասական տարբերակը բնական իրավունքի տեսությունն է, որի հիմնարար գաղափարներն են՝ «...բնական իրավունքը ծագում է բնությունից, գոյություն ունեն դրական իրավունքից վեր կանգնած և դրա վրա ճնշող չգրված օրենքներ, ձգտումը դեպի (իդեալական) արդարությունն առաջնային է (իրական) օրենքների հարգման նկատմամբ...»: Ստացվում է, եթե դրական իրավունքից վեր գոյություն ունի չգրված բնական իրավունք, որը «ճնշում է» դրական իրավունքի վրա, ապա «իրավունքի կենսագործումը» հասկացությունը նախևառաջ ընդգրկում է այդ «ճնշման» գործընթացը, բնական օրենքները դրական իրավունքի վերածելու գործընթացը, իսկ այնուհետև նոր միայն՝ պաշտոնապես հաստատված դրական իրավունքի կենսագործումը (իրականացումը) իր ձևերով:

Ըստ Վ.Ս.Ներսեսյանցի՝ իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը վկայում են իրավահասկացողության երկու հակադիր տիպերի գոյության մասին՝ իրավաբանական և լեգիտատական<sup>14</sup> (որը և՛ նորմատիվիստական, և՛ պոզիտիվիստական է): Այս դասակարգման հիմքում դրված է իրավունքի և օրենքի, օրենսդրության (դրական իրավունքի) նույնացման կամ առանձնացման չափանիշը: Լեգիտատական իրավահասկացողության համար «ի՞նչ է իրավունքը» հարցը, ըստ էության, շատ պարզ և միանշանակ հարց է. «իրավունքն արդեն պաշտոնապես գրված, գործող, դրական իրավունքն է: Օրինականությունն այստեղ չունի հիմ-

նախնդիր, նա ունի միայն դժվարություններ բնորոշելու (սահմանելու) այն, ինչն արդեն կա»<sup>15</sup>: Հետևաբար «իրավունքի կենսագործումը» հասկացությունն օրինականության համար նշանակում հասարակական հարաբերություններում կենսագործել այն, ինչն արդեն կա որպես դրական իրավունք: Այդ տեսանկյունից իրավունքի կենսագործումը չի կարող ունենալ այլ իմաստ, բնորոշման բարդություններ ու տարրնթերցություն: Ըստ Վ.Ս. Ներսեսյանցի՝ իրավաբանական կոչված իրավահասկացությունը իրավունքն առանձնացնում, տարբերում է դրական իրավունքից, արդեն սահմանված, պաշտոնական իրավունքից, օրենսդրությունից, և գոյություն ունի երկու վարկածներով՝ բնական-իրավական և ազատական-իրավաբանական: «Իրավաբանական իրավահասկացողության համար իրավունքը հասարակ կամայական և սուբյեկտիվ իշխանական կարգադրագիր չէ, այլ օբյեկտիվ իր ինքնուրույն, սեփական բնույթով (օրենսդրի կամքից չկախված), իր էությանը և յուրահատկությանը, մի խոսքով՝ իր սկզբունքով ինչ որ բան»<sup>16</sup>:

Լեգիտատական մոտեցման համար «ի՞նչ է իրավունքը» հարցը, ըստ էության, գոյություն չունի, քանի որ նրա համար «իրավունքն արդեն պաշտոնապես տրված, գործող, պոզիտիվ իրավունքն է: Լեգիզմն այստեղ չունի հիմնախնդիր, նա ունի միայն դժվարություններ բնորոշելու (սահմանելու) այն, ինչն արդեն կա»<sup>17</sup>:

Այսպիսով, իրավահասկացողության ձևական, պոզիտիվիստական, նորմատիվիստական, լեգիտատական տիպերում իրավունքի կենսագործում հասկացությունն ունի նեղ, սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական իրավունքի կենսագործում հասարակական իրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ օգտագործման պահպանման, կատարման և կիրառման միջոցով: Մինչդեռ իրավահասկացողության իրավաբանական, բովանդակային (նաև խառը), իդեալիստական, մետաֆիզիկական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է «իրավունքի կենսագործումը» հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը որպես գաղափար, ինչ-որ սկզբունք, օբյեկտիվ էություն կենսագործել իրավական ձևերում (պաշտոնական), աղբյուրներում և հետո միայն իրավունքի սուբյեկտների իրական իրավական վարքագծում: Իրավաբանական գրականությանը բնորոշ իրավական մտածողությունը, նույնացնելով օրենքը (օրենսդրությունը) և իրավունքը, իրավունքի կենսագործումը հանգեցնում է միայն դրական ձև ունեցող իրավական դրույթների կենսագործմանը (իրականացմանը):

Իրավունքի և օրենքի տարբերակման վրա կառուցված իրավամտածողությունը, տարանջատելով իրավունքը և օրենքը իրավական կարգավորման համակարգի առջև դնում է նոր խնդիր՝ պաշտոնականացնել, այսինքն՝ դրական օրենսդրության ձևով արտահայտել միայն իրավունքը (դրա էությունը, սկզբունքը, գաղափարը) և դրա օբյեկտիվ պահանջները: Այդ խնդիրը նախորդում է դրական իրավունքի կենսագործման իրականացմանը, և կարևոր է նրանով, որ իրավունքի պոզիտիվացումը մեխանիկական, ինքնաբերաբար ենթադրվող գործընթաց չէ:

Իրավունքի դրականացման արդյունքում (իրավատեղծագործության միջոցով) ստեղծված իրավական ձևը (աղբյուրը) կարող է ինչպես համապատասխանել իրավունքին, այնպես էլ՝ չհամապատասխանել, շեղվել, հակասել իրավունքին: Իրավական պաշտոնական ձևն արժեքավոր է նրանով և այնքանով, որքանով որ արտահայտում է իրավունքը, այսինքն՝ իրավական է (իրավական օրենք է): Քանի որ իրավական ձևի իրավականությունը չի երաշխավորված ինքնաբերաբար, ուրեմն իրավագիտության առջև բացի դրական իրավունքի դրույթների կենսագործման՝ իրականացման տեսական

իմաստավորումից անհրաժեշտ է ճանաչել և իմաստավորել, իրավունքի կենսագործում հասկացության շրջանակների մեջ ներառել նաև իրավունքի դրականացման գործընթացը՝ որպես իրավաբանական կառուցակարգ: Արդյունքում տեսական հնարավորություն է առաջանում հիմնավորելու նոր իրավական հասկացության առկայությունը, այն է՝ «իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգ», որի բաղադրատարրերն են իրավունքի (էություն) վերածումը դրական իրավունքի (ձևի) և դրական իրավունքի կենսագործումը (իրականացումը):

<sup>1</sup> Տե՛ս Կորկուнов М.М. Лекции по общей теории права, Спб. Юридический центр пресс. 2003. С. 341.  
<sup>2</sup> Տե՛ս Բачинин Ж.А., Сальников В.П. Философия права. Краткий словарь. Спб. Изд. “Лан”, 2000. С. 360.  
<sup>3</sup> Տե՛ս Բачинин Ж.А. Сальников В.П. Философия права. Краткий словарь. Спб. Изд. “Лан”, 2000. С. 360.  
<sup>4</sup> Այդ հոգևոր-իդեալական արժեքները կարող են լինել կրոնական, բարոյական, գեղարվեստական, փիլիսոփայական, ներառյալ իրավական փիլիսոփայական բնույթի մշակութային արժեքներ:  
<sup>5</sup> Տե՛ս Բачинин В.А., Сальников В.П. Философия права. Краткий словарь. Спб. Изд. “Лан”, 2000. С. 117.  
<sup>6</sup> Տե՛ս Лейст О.Э. Сущность права. Проблемы теории и философии права. М. Изд. “Зерцало-М”, 2002. С. 270:  
<sup>7</sup> Տե՛ս Керимов Д.А. Проблемы общей теории права и государства. В 3 т. Т. 1. Социология права.- М. 2001. С 195:  
<sup>8</sup> Տե՛ս Егоров С.Н. Аксиоматические основы теории права, Спб. Изд. “Лексикон”, 2001. С. 92:  
<sup>9</sup> Տե՛ս Քոչարյան Ս.Ս. Իրավաբանական իրավահասկացությունը և օրինականության հիմնախնդիրը, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 112:  
<sup>10</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 1999. С. 75: Հենտելով Վ.Ա. Ներսեսյանցի մոտեցմանը Վ. Չետվերնինն առաջարկում է իրավահասկացողության պոզիտիվիստական (լեգիստական և սոցիոլոգիական) և ոչ պոզիտիվիստական տիպերը (տե՛ս Четвернин В.А. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М. 1997):  
<sup>11</sup> Տե՛ս Бержель Ж. Общая теория права. М. 2000. С. 40-41.  
<sup>12</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Манова Г.Н. М., 1995. С. 34, 37.  
<sup>13</sup> Տե՛ս Бержель Ж. Общая теория права. М. 2000, С. 48-49.  
<sup>14</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 1999. С. 75.  
<sup>15</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М. Издательская группа ИНФРА.М-Норма, 1997. С. 32.  
<sup>16</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М. Издательская группа ИНФРА.М-Норма, 1997. С. 34-35.  
<sup>17</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М. Издательская группа ИНФРА.М-Норма, 1997. С. 32.

**РЕЗЮМЕ**

**Философские представления проблем реализации права в системе правового регулирования**

Прошлые и современные философские учения о реализации права включают в себя тот или иной вариант различения права и закона, что собственно и определяет философско-правовой профиль соответствующего подхода. Речь при этом идет о различных формулировках такого различения, в частности, о различении права по природе и права по человеческому установлению, права естественного и права волеустановленного, справедливости и закона, естественного права и человеческого права, естественного права и позитивного права (сам термин “позитивное право” возник в средневековой юриспруденции), разумного права и позитивного права, философского права и позитивного права, правильного права и позитивного права и т. д.

Процесс реализации права, наряду с необходимостью учета объективных свойств и требований права, зависит от многих объективных и субъективных факторов (социальных, экономических, политических, духовных, культурных, собственно законодательских и т. д.).

Поэтому, говоря об общем (и едином) понятии позитивного права и соответствующих дефинициях, мы имеем в виду правовой закон, т. е. позитивное право в его совпадении, но не в расхождении и противоречии с объективными свойствами и требованиями права. Мы оперируем правовыми определениями и правовыми понятиями, подразумевающими объективную правовую природу и характер соответствующих феноменов.

**SUMMARY**

**THE PHILOSOPHICAL APPREHENSIONS OF THE ISSUE OF THE LEGAL ACCOMPLISHMENT IN THE SYSTEM OF THE LEGAL REGULATION**

This article states that the law and the legal regulation in accordance to the philosophical aspects originated from the legal ideals that is the plan and the theory pass the process of the positivism and transform to the legal requirements with normative form.

It is apparent that the positive legal form has not still realized. Furthermore, the process of the legal structure must be continued to accomplish above mentioned legal normative form and ideal in practice.

It is significant to mention that the article promotes and confirms the issue of new legal definition that is the legal structure of the law accomplishment with the components of the legal transformation to the positive legal type and positive legal implementation. This kind of analysis and the emanated conclusion consider to be an undisputed novelty in the present theory of law.